# ՓԵՏՐՎԱՐԻ 23-ը ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՕՐՆ Է

## ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ, ՍՐՏԱՆՑ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Այսօր մենք մեծարում ենք մեր երկրի փառապանծ վինված ուժերում ծառայողներին, ասում ենք սրտաբուխ ու ջերմ խոսքեր բոլոր նրանց, ովքեր ոչ հեշտ ու անչափ պատասխանատու ծառայության մեջ են, հսկում և ապահովում են մեր հայրենիքի սահմանների անձեռնմխելիությունը, ովքեր արհավիրքի տարիներին խիզախորեն մարտնչել են հանուն ազատության և անկախության ու կարողացել են պատվով դուրս գալ ամենադաժան փորձություններից:

Հայրենիքի պաշտպանների պանծալի տոնը, որ դարձել է համաժողովրդական և ամենուրեք նշվում է մեծ շուքով, խորհրդանշում է սերունդների անխզելի կապը և վկայում է փինվորական լավագույն ավանդների փոխանցելիության մասին: Վերհիշելով հայրենիքի պատմության հերոսական դրվագները, մենք հպարտորեն նշում ենք, որ մեր ժողովուրդը փառաբանված է հայրենիքի իսկական պաշտպաններով:

Թանկագին հայրենակիցներ, սրտանց ցանկանում ենք ամբողջ աշխարհին խաղաղություն, իսկ ձեզ՝ ամուր առողջություն, երջանկություն, բարօրություն և հաջողություններ:

# ՀԱՐԱԶԱՏ ԴՈՆԻ ԵՎ ՍՏԱԼԻՆԳՐԱԴԻ ՀԵՐՈՍ ՊԱՇՏՊԱՆԸ

Սովետական Միության հերոս, կործանիչ ավիացիայի օդաչու, էսկադրիլիայի հրամանատար Սերգեյ Բուռնայյանի անունը ոսկե տառերով է գրված է Հայրենական մեծ պատերազմի հերոսական տարեգրության մեջ:

Խիզախ օդաչուի մարտական սխրանքների ճանապարհները են եղել հերոսական Ստալինգրադի, Դոնի և Ուկրաինայի երկինքները:

Մշակելով օդային կռիվների իր ձևերն ու մեթոդները, որ հարստացնում էր յուրաքանչյուր մարտում, Բուռնայյանը դրանք հաղորդում էր մարտական ընկերներին: Քսանհինգամյա երիտասարդը արդեն ձեռք էր բերել ռազմաճակատի փորձված ու խիզախ օդաչուի համբավ: Նա ուներ մարտական գործողությունների իր կանոնները. գիտեր խորապես թափանցել մարտի էության մեջ, կարողանում էր տեսնել "անտեսանելին", արագությամբ կողմնորոշվել ստեղծված իրադրության մեջ, ընտրելով հաղթելու ամենաճիշտ ուղին:

Սերգեյ Ավդեյի Բուռնայյանը ծնվել է 1918 թվականի մայիսի 28-ին Վելիկոկնյաժեսկոյե ստանիցայում (այժմ՝ Ռոստովի մարզի Պրոլետարսկ քաղաք): 1931-ին 13-ամյա պատանին ծնողների հետ տեղափոխվում է Հայաստան և իր ուսումը շարունկում Երևանի Պուշկինի անվան միջնակարգ դպրոցում, որտեղ և մասնակցում է ավիամոդելիստների խմբակի աշխատանքներին: 1937 թվականին Բուռնայյանը ընդունվում է Երևանի ավիաակումբը, ուսումնասիրում է թռիչքային տեխնիկան: Այստեղից էլ նրան գործուղում են Խերսոնի կործանիչ ավիացիայի փինվորական դպրոց: Որպես լավ մասնագետ, դպրոցի հրամանատարությունը որոշում է Սերգեյ Բուռնայյանին թողնել տեղում իբրև հրահանգիչ-օդաչու: 1938-ից նա ծառայում է Կարմիր բանակում:

Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, Սերգեյ Բուռնայյանը մեկնում է ռազմաճակատ և կործանիչ ավիացիայի 629-րդ ավիագնդի կազմում մասնակցում է Բրյանսկ-Խարկովի ուղղությամբ մղվող մարտերին: Այնուհետև նա մասնակցում է Ստալինգրադի հերոսական ճակատամարտին, կատարում 23 մարտական թռիչք: Ստալինգրադի ռազմաճակատով մեկ թևածում էր Բուռնայյանի անունը: Նրա խիզախության, հիանալի մարտունակության մասին լեգենդներ էին պատմում: Այդ ահեղ մարտերի օրերին Բուռնայյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով: Շուտով նրան շնորհվում է ավագ լեյտենանտի կոչում, նա նշանակվում է կործանիչ ավիացիայի էսկադրիլիայի հրամանատար:

Նրա էսկադրիլիան, հերոսաբար մարտնչելով Ստալինգրադի ռազմաճակատում, հմտորեն պաշտպանում էր գրոհայինների գործողությունները: Մարտական շատ խնդիրներ են կատարել Բուռնայյանի ղեկավարությամբ գործող էսկադրիլիան և փառաբանված օդաչուն Ստալինգրադի պաշտպանության օրերին, Վոլգայի և Դոնի միջև ընկած տարածքում:

"Ես մի նպատակ ունեմ,- ռազմաճակատից հարազատներին ուղարկած նամակում գրել է Սերգեյ Բուռնայյանը,- թռչել և ոչնչացնել հիտլերականներին": Այս երդմանը հավատարիմ մնալով էլ ամեն անգամ նա ցասումով, ատելությամբ է հարվածել հակառակորդին, պատվով կատարել ստացած առաջադրանքները:

1942-ի վերջերին էսկադրիլիան տեղափոխվում է Հարավ-Արևմտյան ռազմաճակատ և 866-րդ գնդի կազմում մասնակցում Հյուսիսային Դոնեցկի մոտ, Իզյում-Բարվենկովոյի շրջանում, ապա Ուկրաինայի ազատագրման համար ծավալված մարտերին: Բուռնայյանի պարգևատրման թերթիկում այսպես է տրված խիզախ օդաչուի բնութագիրը. "Համարձակ, անվախ օդաչու էր: Գերազանցորեն տիրապետելով թռիչքային տեխնիկային, օդային բոլոր մարտերում նախաձեռնությունը շարունակ վերցնում էր իր ձեռքը: Մարտերում իրեն պահում էր սառնարյուն և վստահ: Հակառակորդի գերազանցող ուժերի դեմ մարտերի մեջ մտնելով, միշտ թելադրում էր իր կամքը":

Բուռնայյանի էսկադրիլիան 1943 թվականի մարտին արդեն կատարել էր 815 մարտական թռիչք, մղել 62 օդային մարտ և ցած գցել թշնամու 65 ինքնաթիռ: Ինքը կատարել է 224 մարտական թռիչք, անձամբ ցած գցել 22 ինքաթիռ, 2 հատ էլ՝ խմբի կազմում:

Իր մարտական վարպետությունը կատարելագործելու մշտական և անդուլ ձգտումն ու խիզախումը հերոս օդաչուի ամենաբնորոշ գծերն էին: Յուրաքանչյուր թռիչքի խոր ըմբռնումը, գործադրած մարտական տակտիկայի, հնարքների ու ձևերի մանրամասն վերլուծումը նա օգտագործում էր ոչ միայն իր մարտական ընկերներին վարժեցնելու, նրանց մարտունակությունը բարձրացնելու համար, այլև իր սեփական փորձն ու գիտելիքները հարստացնելու գործում: Բուռնայյանի և նրա էսկադրիլիայի յուրաքանչյուր մարտական թռիչք ոչ միայն հակառակորդին ոչնչացնելու մարտ է եղել, այլև օդային տակտիկայի նոր եղանակների պրակտիկ կիրառում:

Սերգեյ Բուռնայյանի օդային մարտի տակտիկայում ամենագլխավորը համարձակ և անակնկալ գրոհն էր: Նա օդային մարտում պաշտպանություն չէր ընդունում և երբեք էլ չէր կիրառում: Բուռնայյանի ամբողջ էսկադրիլիան պարգևատրված էր շքանշաններով: Հրամանատարի կուրծքը նույնպես կարդարում էին մարտական շքանշանները: "Շքանշանների էսկադրիլիա" այսպես էին անվանում Բուռնայյանի բազեներին: Եվ երբ նրանք երևում էին երկնքում մեր կորքերի գլխավերևում, բոլորը գիտեին, որ թշնամու ոչ մի օդահեն չի կարող խանգարել իրենց մարտական խնդիրը կատարելու:

Խերսոն կատարած թռիչքը վերջինը եղավ Բուռնայյանի համար: 1943-ի ապրիլի 15-ին ռմբակոծվեց այն գնացքը, որով նա մեկնում էր նոր ինքնաթիռ ընդունելու... Մեր ժողովրդի արժանավոր զավակի աճյունն ամփոփված է Վորոնեժի մարզի Բորիսոգլեբսկ քաղաքում: Ի հիշատակ նրա, Երևան է փոխադրվել հերոս օդաչուի մարտական ինքնաթիռը, որի վրա շողշողում էին նրա խփած 24 ինքնաթիռների խորհրդանիշ աստղերը:

Արիության և հերոսության համար ներկայացվել էր Սովետական Միության հերոսի կոչման, որին նա արժանացավ հետմահու՝ Գերագույն Սովետի 1944 թվականի օգոստոսի 2-ի հրամանագրով: Անվեհեր օդաչուն պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի երկու, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշաններով: Նրա անունով է կոչվում Երևանի փողոցներից մեկը, դպրոց, հանրապետական օդաչուական ակումբը, որտեղ նա կատարել է իր առաջին թռիչքային քայլերը:

### ԽՈՍՔ ԲԱԶԵԻ ՄԱՍԻՆ

Կործանիչների ավիամիավորումը, որի կազմի մեջ էր Բուռնայյանը, համառ օդային ճակատամարտեր մղեց Կուրսկի և Խարկովի համար: Նա այստեղ ևս մրրկահավի պես մեկ սլանում էր դեպի վեր, կորչում ամպերի մեջ, թաքնվում թշնամու կենիթայինների կրակից, մեկ խոյընթաց սլանում էր ցած և իր ամբողջ ռումբերի բեռը անվրեպ



թափում թշնամու խոշոր կուտակումների վրա՝ մեծ կորուստներ պատճառելով հիտլերականներին:

Արմո ՄԱԼԽԱՍՅԱՆ

"Անմահություն" գրքում, էջ 47

* * *

Բուռնայյանը բացառիկ պատասխանատվության կգացումով էր վերաբերվում իր հրամանատարական աշխատանքին, ամենուրեք և միշտ բարձր էր պահում սովետական սպայի պատիվն ու արժանապատվությունը: Նա իր ստորադրյալների համար ամեն բանով օրինակելի էր: Նրանք աշխատում էին ամեն ինչով նմանվել իրենց հրամանատարին, նա իր էսկադրիլիայի հայրն էր ու հոգին: Իր ստորադրյալներին սովորեցնում էր. "Մարտում հետևեցեք ինձ և գործեք այնպես, ինչպես ես եմ գործում":

Գ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

"Ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնայյան" գրքում, էջ 22

* * *

Բուռնայյանը իր անձնական օրինակով օդաչուներին ոգևորում, դեպի հերոսություն էր տանում: "Միշտ ինքներդ որոշեցեք հարձակման նպատակահարմար դիրքն ու տեղը,- ասում էր Սերգեյը:- Հիշեցեք, որ մարտից հաղթող պետք է դուրս գալ: Մարտում մի պաշտպանվեք, այլ միշտ հարձակվեք",- իր մարտական ընկերներին խորհուրդ էր տալիս հրամանատարը:

* * *

Բուռնայյանը իր կայտառ բնավորության և գրավիչ ընկերասիրության շնորհիվ դարձել էր շրջապատի սիրելին: Կովկասցի Բուռնայյանի և Կուբանի կազակ, Սովետական Միության հերոս Զուչվագայի անձնական մտերմության մասին հիացմունքով էին խոսում բոլորը: Որքան ջերմ էր դաժան մարտերում ծնված նրանց մտերմությունը: Թե ինչպիսի խոր սիրով էր կապված Բուռնայյանը իր էսկադրիլիայի մարտիկների հետ, այդ մասին է վկայում նրա մտերմությունը իր մարտական ուղեկից սերժանտ Լադիգինի հետ...:

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

"Երեկոյան Երևան", 1985, 6 մայիսի